2. Վաղարշապատի համայնքապետարանի «Բնակարանային կոմունալ վարչություն» բյուջետային հիմնարկի պետին լիազորել կատարելու գույքի բռնագրավում:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկատվությունում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ **Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 302Ա

28 մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ 2-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 175/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՐԻՍՊԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ/ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքը, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման և համայնքի ղեկավարի 20.03.2024թ. թիվ 355Ա որոշման առաջարկել է կառույցն իրականացնող անձին՝ Արաիկ Կոստանդյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ գնել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 175/1 հասցեում գտնվող՝ 23.9քմ /23.9քմ արտաքին և 23.9քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0207հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

Արաիկ Կոստանդյանի լիազորված անձ Մխիթար Արամի Աբրահամյանը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ իր վստահորդի անունից գնելու այն, ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-Ն որոշմամբ սահմանված գների՝ 23.9քմ /23.9քմ արտաքին և 23.9քմ ներքին/ մակերեսով պարիսպը 79 970 / յոթանասունինը հազար ինը հարյուր յոթանասուն / ՀՀ դրամ և 0.0207հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը կադաստրային արժեքի չափով 597 713 / հինգ հարյուր իննսունյոթ հազար յոթ հարյուր տասներեք / ՀՀ դրամ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արաիկ Կոստանդյանին գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/ վաճառել Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան 2-րդ թաղամասի թիվ 175/1 հասցեում գտնվող՝ 23.9քմ /23.9քմ արտաքին և 23.9քմ ներքին/ մակերեսով պարիսպը և դրա պահպանման ու սպասարկման համար զբաղեցրած 0.0207հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը:

2.Հանձնարարել քաղաքաշինության և հողաշինության բաժնին Արաիկ Կոստանդյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8031Ա

«28» նոյեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 07.08.2023 թվականի թիվ 70-Ա որոշումը, հաշվի առնելով անկախ գնահատող «Ֆուլ քոնսալթինգ գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հաշվետվությունը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ու 24-րդ կետերի և 57-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Toyota Isis 2.0 մակնիշի (թողարկման տարեթիվը 2005թ, նույնականացման համար-ANM10-0036196) փոխադրամիջոցը:
2. Փոխդրամիջոցի մեկնարկային գինը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից սահմանված արժեքի՝ 1 200 663 /մեկ միլիոն երկու հարյուր հազար վեց հարյուր վաթսուներեք/ ՀՀ դրամ:
3. Աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50% չափով:
4. Աճուրդի աճուրդային քայլը սահմանել մեկնարկային գնի 5% չափով:
5. Փոխադրամիջոցի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8044

«20» դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Էջմիածին համայնքի ավագանու 27.04.2021 թվականի թիվ 47 և 19.07.2021 թվականի թիվ 89 որոշումները, հաշվի առնելով համայնքի ավագանու 26.01.2021թ-ի թիվ 20 որոշումը, անկախ գնահատող «ԱՎՅԱՆ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հաշվետվությունը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ու 24-րդ կետերի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և 102-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող GAZ 3102 մակնիշի (թողարկման տարեթիվը 2007թ, նույնականացման համար-X9631020071373045) փոխադրամիջոցը:
2. Փոխդրամիջոցի մեկնարկային գինը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից սահմանված արժեքի՝ 345 168 /երեք հարյուր քառասունհինգ հազար հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ:
3. Աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50% չափով:
4. Աճուրդի աճուրդային քայլը սահմանել մեկնարկային գնի 5% չափով:
5. Փոխադրամիջոցի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 80514

«20» հունիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 07.08.2023 թվականի թիվ 70-Ա որոշումը, հաշվի առնելով անկախ գնահատող «Ֆուլ քոնսալթինգ գրուպ» ՍՊԸ-ի կողմից գնահատման հաշվետվությունը և ղեկավարվելով «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ու 24-րդ և 57-րդ հոդվածի 2-րդ մասի կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող VAZ 2107 մակնիշի (թողարկման տարեթիվը 2005թ, նույնականացման համար-XTA2107003168692) փոխադրամիջոցը:
2. Փոխադրամիջոցի մեկնարկային գինը սահմանել համաձայն համայնքի ավագանու կողմից սահմանված արժեքի՝ 354 294 /երեք հարյուր հիսունչորս հազար երկու հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամի չափով:
3. Աճուրդի նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50% չափով:
4. Աճուրդի աճուրդային քայլը սահմանել մեկնարկային գնի 5% չափով:
5. Փոխադրամիջոցի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8064

«20» դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 22.08.2022 թվականի թիվ 121 որոշումը, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ու 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի, 20-22կմ թիվ 62 հասցեում գտնվող 0,0244 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-0001-0036/ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով:
2. Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ թիվ 62 հասցեում գտնվող 0,0244 հա մակերեսով հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 550% չափով:
3. Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ թիվ 62 հասցեում գտնվող 0,0244 հա մակերեսով հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8074

«20» նոյեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 22.08.2022 թվականի թիվ 121 որոշումը, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի ընդգրկվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 67-րդ, 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ ու 24-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աճուրդային եղանակով վաճառել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի, 20-22կմ թիվ 60 հասցեում գտնվող 0,0264 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 04-002-0001-0017/ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, հասարակական նշանակության շինություն կառուցելու նպատակով:
2. Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ թիվ 60 հասցեում գտնվող 0,0264 հա մակերեսով հողամասի մեկնարկային գինը սահմանել տվյալ հողի կադաստրային արժեքի 550% չափով:
3. Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզ, համայնք Վաղարշապատ, Էջմիածին քաղաք, Երևան-Արմավիր մայրուղի 20-22կմ թիվ 60 հասցեում գտնվող 0,0264 հա մակերեսով հողամասի աճուրդային քայլը սահմանել հողամասի մեկնարկային գնի 5% չափով:
4. Հողամասի աճուրդային եղանակով վաճառքն իրականացնել համայնքապետարանի աճուրդային հանձնաժողովի միջոցով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8084

28 մայիսի 2024թ.

ք. Էջմիածին

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքի /սահմանափակման/ պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 14.03.2023թ. թիվ Կ-14032023-04-0129 որոշումը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 17.08.2023թ. թիվ 01/11.1/10738-2023 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նոր Եվդոկիայի փողոցի թիվ 1/4 հասցեում գտնվող 0.00368հա մակերեսով հողամասից 0.000705հա մակերեսով մասի գործառնական նշանակությունը ընդհանուր օգտագործումից փոփոխել բնակելի կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8094

30 մայիսի 2024թ. գ. Էջմիածին

ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՉԻԿ ՄԻՍԱԿԻ ՄԻՆԱՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Խաչիկ Միսակի Մինասյանի լիազորված անձ՝ Գևորգ Խաչիկի Մինասյանի դիմումը՝ պարզվեց, որ սեփականության իրավունքով Խաչիկ Միսակի Մինասյանին պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 09.04.2024թ. հաստատված թիվ 1666 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, 23.02.1987թ. տրված տեխնիկական անձնագիր և «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 20.02.2024թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտասի փողոցի թիվ 20 հասցեում գտնվող 0.0738 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերը նշվածը, հիմք ընդունելով, որ անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Կոմիտասի փողոցի թիվ 20 հասցեում գտնվող 0.0738 հա մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում մինչև 15.05.2001թ. կառուցված, 80% և ավելի ավարտվածության աստիճան ունեցող բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շինությունը, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել Խաչիկ Միսակի Մինասյանի /ծնված՝ 23.03.1951թ./ սեփականությունը:
2. 7.60 քմ մակերեսով շինությունը համարել ինքնակամ:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 810Ա

20 մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ <<ԶՎԱՐԹՆՈՑ>> ԳԿՏ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻՑ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատի համայնքապետարան է դիմել Համլետ Ռազմիկի Եղիազարյանի լիազորված անձ,Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Այգեկ գյուղի Երևանյան խճուղի փողոցի թիվ 2 նրբանցքի թիվ 2 շենքի թիվ 12 բնակարանի բնակիչ Նելլի Հակոբի Հակոբյանը, Համլետ Ռազմիկի Եղիազարյանին պատկանող /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Սամվել Վրեժի Ղարիբյանի կողմից 06.03.2024թ. հաստատված թիվ 1671 գրանցամատյանով գրանցված ըստ կտակի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր և <<Կարեն Մաչանյան>> ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 12.03.2024թ. կազմված հատակագիծ/, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող /ծածկագիր՝ 04-002-0389-0007/, 0.3317հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի փոխադրելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 12.11.2009թ. թիվ 151 կարգադրությամբ ստեղծված բարձրարժեք հողատեսքը ավելի ցածրարժեք հողատեսքի փոխադրող հանձնաժողովի 10.05.2024թ. թիվ 10 նիստի եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի <<Զվարթնոց>> ԳԿՏ տարածքում գտնվող / ծածկագիր՝ 04-002-0389-0007/, 0.3317հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության բարձրարժեք հողատեսքը՝ խաղողի այգին, փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ԴԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 811Ա

20 նոյեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.05.2024Թ. ԹԻՎ 785Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 15.05.2024թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տունը Անդրանիկ Սերյոժայի Գրիգորյանի սեփականությունը համարելու մասին» թիվ 785Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

հիմնական և եզրափակիչ մասում նշված «Հ. Այվազովսկու փողոց թիվ 51 բնակելի տուն» բառերի փոխարեն կարդալ «Ա. Խաչատրյան փողոց թիվ 51 բնակելի տուն» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 818Ա

20 մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.05.2024Թ. ԹԻՎ 786Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի ղեկավարի 15.05.2024թ. «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 786Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
հիմնական և եզրափակիչ մասում նշված «Հ. Այվազովսկու փողոց թիվ 51 բնակելի տուն» բառերի փոխարեն կարդալ «Ա. Խաչատրյան փողոց թիվ 51 բնակելի տուն» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8134

22 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ՎԱՐԴԱՆ ԱՌԱՔԵԼԻ ԲԱՐԱՔԵՋՅԱՆԻՆ ՈՉ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 06/24 վարչական գործը՝ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ.Ազգալդյան /նախկին Վ.Կոստանյան/ փողոցի 4 հասցեին կից Վարդան Առաքելի Բարաքեզյանի կողմից ոչ սահմանված տեղում առևտուր իրականացնելու համար վարչական տույժ նշանակելու վերաբերյալ, պարզեց, որ

Վարդան Առաքելի Բարաքեզյանը (հասցե՝ Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Լ.Ազգալդյան փող., թիվ 6 շենք, թիվ 14 բնակարան, ն/ք՝ 002043958, տրված 08.09.2014թ.-ին 051-ի կողմից), Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ.Ազգալդյան /նախկին Վ.Կոստանյան/ փողոցի 4 հասցեին կից գտնվող տարածքում, խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները՝ ոչ սահմանված տեղում իրականացրել է առևտուր, ինչի կապակցությամբ ՀՀ ՆԳ նախարարության ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 11.04.2024թ.-ի թիվ 51-4/13-4652 գրության և կից նյութերի /համայնքապետարան մուտքագրվել է 23.04.2024թ./ հիման վրա 2024 թվականի ապրիլի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի իրավախախտման հատկանիշներով հարուցվել է վարչական վարույթ:

Վաղարշապատի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովը հրավիրել և անցկացրել է լսում՝ որի անցկացման վայրի և ժամանակի մասին Վարդան Առաքելի Բարաքեզյանը պատշաճ ծանուցված է եղել, սակայն լսումներին չի ներկայացել:

<u>Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.</u>

1. ՀՀ ՆԳ նախարարության ոստիկանություն Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժնի պետ՝ Ա. Ոսկանյանի 11.04.2024թ.-ի թիվ 51-4/13-4652 գրությունը զեկուցագիրը և արձանագրությունը:

2. Հանձնաժողովի 14.05.2024թ. և 20.05.2024 թ. թիվ 06/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ թիվ 1 և թիվ 2 արձանագրությունները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարդան Առաքելի Բարաքեզյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ.Ազգալդյան /նախկին Վ.Կոստանյան/ փողոցի 4 հասցեին կից գտնվող տարածքում, իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում:

Նշված փաստական հանգամանքները հաշվի առնելով՝ 2024 թվականի ապրիլի 23-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով, Վաղարշապատի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 թվականի մայիսի 14-ին հրավիրվել է լսում, որը հետաձգվել է Վարդան Առաքելի Բարաքեզյանի կողմից ծանուցումը չստանալու պատճառով:

Այլ հերթի նշանակված լսումը հրավիրվել և անցկացվել է 2024 թվականի մայիսի 20-ին, իսկ ծանուցումը հրապարակվել ՀՀ հրապարակային ծանուցումների azdarar.am պաշտոնական կայքում:

Վարդան Առաքելի Բարաքեզյանը, չնայած «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով՝ պատշաճ ծանուցված լինելով 2024 թվականի մայիսի 20-ին հրավիրված

վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը, չի ներկայացրել բացատրություններ և միջնորդություններ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ոչ սահմանված տեղերում կամ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ առևտուր իրականացնելը կամ ծառայություն մատուցելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի յոթանասունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով՝ առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ կամ առանց դրա:

<<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ առևտրի իրականացման վայրի տեսակներն են՝ առևտրի կենտրոնները, սպառողական ապրանքների շուկաները, գյուղատնտեսական արտադրանքի շուկաները, կենդանիների շուկաները, տոնավաճառները (վերնիսաժները) և ցուցահանդես-վաճառքի անցկացման վայրերը:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց թույլատրվում է առուվաճառք իրականացնել միայն գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում, ավտոտրանսպորտային միջոցների շուկաներում, կենդանիների շուկաներում և տոնավաճառներում (վերնիսաժներում): Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց արգելվում է իրականացնել վաճառք սույն օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի, 14-րդ մասի «ա» և «բ» ենթակետերով նշված ապրանքների, ինչպես նաև համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա սննդամթերքի:

Տվյալ դեպքում՝ Վարդան Առաքելի Բարաքեզյանը Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Լ.Ազգալդյան փողոցի 4 հասցեին կից մայթի վրա իրականացրել է առևտուր, դրա համար ոչ սահմանված տեղում՝ չվերացնելով իրավախախտման հետևանքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 32-րդ և 162-րդ հոդվածի 1-ին մասով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով, 5-րդ հոդվածի 1-ին մասով և <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վարդան Առաքելի Բարաքեզյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար՝ **70 000 /յոթանասուն հազար/** ՀՀ դրամի չափով :

2.Նախազգուշացնել Վարդան Առաքելի Բարաքեզյանին, որ սույն որոշմամբ տուգանք նշանակելուց հետո Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը վարչական տույժի նշանակման օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին կատարելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, առևտրի կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործվող և իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առարկաների բռնագրավմամբ:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ վերադասության կարգով և/կամ ՀՀ վարչական դատարան, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, օրենքով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 814-Ա

«22» մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 48 հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակիչները գտնվում են սոցիալապես ծանր պայմաններում, Վաղարշապատի համայնքապետարան են դիմել թվով 11 բնակիչներ ֆինանսական օգնություն ստանալու խնդրանքով:

Անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Վաղարշապատ համայնքի 2024թ. բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցներից Վաղարշապատ համայնքի թվով 11 բնակիչների հատկացնել 663050 դրամ դրամական օգնություն համաձայն կից ցուցակի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված

ՑՈՒՑԱԿ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 11 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ «22» ՄԱՅԻՍԻ 2024Թ. ԹԻՎ 814-Ա ՈՐՈՇՈՒՄՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ

	Ազգանուն, Անուն, Հայրանուն	Հասցե	Անձնագրի N	Գումար
1.	Հովհաննիսյան Սարգիս Բենիամինի	Սբ. Մ. Խորենացի, 1 հանր, բն 1/56	AX0212777	40200
2.	Հակոբյան Հակոբ Իվանի	Չարենց 23/30	AU0578339	40200
3.	Սարգսյան Գայանե Ժորժիկի	Ռաֆֆու 22/1	AL0206367	40200
4.	Մարտիրոսյան Գագիկ Բաբկենի	Սբ. Մ. Խորենացի 1/17	003933751	40200
5.	Ավետիսյան Լալա Գևորգի	Մեխակյան 15	AS0488404	50200
6.	Բաղդասարյան Ռոզա Հովսեփի	Այվազովսկի 4	AU0546642	50200
7.	Տիգրանյան Միլկա Ավագի	Շահումյան 79/15	003293198	50200
8.	Մուրադյան Գրետա Սուրենի	Սբ. Մ. Մաշտոց 63/36	AV0597695	50200
9.	Հովհաննիսյան Լուսյա Ավետիսի	Սբ. Մ. Մաշտոց 152	AR0651611	50200
10.	Գալստյան Մարգարիտ Հակոբի	Հոկտեմբեր 16ա	004100822	100500
11.	Միրզոյան Անի Մնացականի	Դավիթ Անհաղթ 63	AX0254676	150750
ԸՆԴԱՄԵՆԸ				663050

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 815Ա

22 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Սարգիս Բաբկենի Մելոյանի լիազորված անձ՝ Նիկոլայ Գուրգենի Մելքոնյանի դիմումը, Սարգիս Բաբկենի Մելոյանին պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 1228446 տրված՝ 26.10.2005թ., «Սևան Թովմասյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0296/ կողմից 18.09.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04002MKVDBMP, 040027CVWZHY/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Նալբանդյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 50 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 15/6 խանութ,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վազգեն Առաջինի փողոց թիվ 15/7 խանութ:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8164

22 Դեկտեմբերի 2024թ. գ. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 50 ՏԱՐԱԾՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սարգիս Բաբկենի Մելոյանի լիազորված անձ Նիկոլայ Գուրգենի Մելքոնյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան Սարգիս Բաբկենի Մելոյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 26.10.2005թ. տրված թիվ 1228446 սեփականության վկայական / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Նալբանդյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 50 տարածքի օգտագործման նպատակը խանութի փոփոխելու խնդրանքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Կառավարության 02.02.2002թ. թիվ 88 որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Մ.Նալբանդյան փողոցի թիվ 1 շենքի թիվ 50 տարածքի օգտագործման նպատակը փոփոխել խանութի, որը հնարավոր է առանց նախագծային փոփոխությունների:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 81/14

22 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի, Հայոց Բանակի /նախկին Սովետական բանակի/ փողոցի թիվ 15 տան բնակիչ՝ Հրանուշ Մխիթարի Հովհաննիսյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 01082023-04-0022 տրված՝ 01.08.2023թ., «Ավագ Ավագյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից 10.05.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 04025SJLMFFB, 04999P9SFW6H/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Հայոց բանակի /նախկին Սովետական բանակի/ փողոցի թիվ 15/1 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հայոց բանակի փողոց թիվ 15/1 բնակելի տուն,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Հայոց բանակի փողոց թիվ 15/2 բնակելի տուն:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8184

22 դեկտեմբեր 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՍՈՒՐԲ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 101/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 411 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Խորենացու փողոցի թիվ 101/1 շենքի թիվ 411 բնակարանի բնակիչ Հակոբ Պետրոսի Գևորգյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն, Տաթևիկ Մանվելի Խաչատրյանին, Կարինե Հակոբի Գևորգյանին, Պետրոս Հակոբի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 17.11.2017թ. տրված թիվ 17112017-04-0055 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Աստղիկ Մանուկյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 096/ կողմից 29.03.2024թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023UHUBYE / Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 101/1 շենքի թիվ 411 բնակարանին կից ինքնակամ կառուցված 44.4քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մովսես Խորենացու փողոցի թիվ 101/1 շենքի թիվ 411 բնակարանին կից ինքնակամ կառուցված 44.4քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 26 228 / քսանվեց հազար երկու հարյուր քսանչորս / ՀՀ դրամ:
2.Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8194

28 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387–Ն որոշման պահանջներով և քննարկելով Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Տարոնիկ գյուղի Անդրանիկի փողոցի թիվ 36 տան բնակիչ՝ Աննա Աշոտի Սեկոյանի դիմումը իրեն պատկանող անշարժ գույքը բաժանելու մասին /հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական թիվ 25042024-04-0004 տրված՝ 25.04.2024թ., «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 13.05.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագրեր՝ 040258PEYGYW, 04999KEQ8RN2/.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ. Տերյան փողոցի թիվ 98/2 հասցեում գտնվող անշարժ գույքը բաժանել՝ համաձայն ներկայացված հողամասի բաժանման սխեմայի.

Առանձնացվող հատված 1-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ. Տերյան փողոց թիվ 98/2 ավտոտնակ,

Առանձնացվող հատված 2-ին տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք. Էջմիածին, Վ. Տերյան փողոց թիվ 98/3 հողամաս:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8ՀԵԿ

22 մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾԻ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԹԻՎ 32 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿՑԱԿԱՌՈՒՑՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 16 շենքի թիվ 32 բնակարանի բնակիչ Վահե Արկադիյի Ավանեսյանը դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն, Նեկտար Ազատի Մոլեքյանին, Վիկտորյա Արկադիի Ավանեսյանին, Ալբերտ Արկադիի Ավանեսյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 15.09.2005թ. տրված թիվ 2097075 սեփականության վկայական, ՀՀ «Արմավիրի մարզի» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 22.04.2024թ. հաստատված թիվ 1877 գրանցամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր, ՀՀ «Արմավիրի մարզի» նոտարական տարածքի նոտար Նառա Սամվելի Հովհաննիսյանի կողմից 17.04.2024թ. հաստատված թիվ 1876 գրանցամատյանով գրանցված իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին նոտարական ակտը, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 08.12.2023թ. կազմված հատակագիծ և կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023FHZ2DV /, Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 16 շենքի թիվ 32 բնակարանին կից ինքնակամ կառուցված 20.1քմ մակերեսով կցակառույցի օրինականացման խնդրանքով:

Ինքնակամ կցակառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառուցված կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի թիվ 16 շենքի թիվ 32 բնակարանին կից ինքնակամ կառուցված 20.1քմ մակերեսով կցակառույցը ճանաչել օրինական, որի համար սահմանված վճարը կազմում է 11 874 / տասնմեկ հազար ութ հարյուր յոթանասունչորս / ՀՀ դրամ:
2. Շենքի զբաղեցրած հողամասը անհատույց բաժնային սեփականության իրավունքով փոխանցել շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 821Ա

22 մայիսի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՏԵՐՅԱՆ ԹԻՎ 963 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԱԾԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Սուրբ Մ.Մաշտոցի փողոցի թիվ 30Ա շենքի թիվ 38 բնակիչ Արմինե Սահակի Պետրոսյանի դիմումը՝ պարզվեց, որ վերջինս դիմել է Վաղարշապատի համայնքապետարան՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 22.08.2018թ. տրված թիվ 22082018-04-0058 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական, «Կարեն Մաչանյան» ԱՁ-ի /որակավորման վկայական թիվ 0244/ կողմից 25.08.2023թ. կազմված հատակագիծ, Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2023EHWWME/ Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 963 հասցեում գտնվող 0.047հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 28քմ / 28քմ արտաքին, ներքին 25.9քմ/ մակերեսով ծածկը օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 24.12.2021թ. ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով, որ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Վ.Տերյան փողոցի թիվ 963 հասցեում գտնվող 0.047հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում, ինքնակամ կառուցված 28քմ / 28քմ արտաքին, ներքին 25.9քմ / մակերեսով ծածկը ճանաչել օրինական, որի համար սահմանված 46 844 / քառասունվեց հազար ութ հարյուր քառասունչորս / ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարույթի մասնակցին իրազեկելու հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8224

22 մայիսի 2024թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Ավետիք Անդրանիկի Պետրոսյանի լիազորված անձ՝ Արտյոմ Նորիկի Պետրոսյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Գ. Չաուշի /նախկին Կատովսկի/ փողոցի թիվ 19 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 30.11.2021թ. վճիռ գործ թիվ ԱՐԴ1/3216/02/21 և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04999DJL8KCJ/ տրամադրել հասցե՝ Վաղարշապատ համայնք ք.Էջմիածին, Գ. Չաուշի փողոց թիվ 19/1 հողամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 823 Ա

24 մայիսի 2024 թ. ք.Էջմիածին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով և քննարկելով Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Ռ. Պատկանյան փողոցի թիվ 5 շենքի թիվ 8 բնակարանի բնակիչ՝ Սիմոն Մարտինի Արնշատյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի Էջմիածին-Չոբանքարա խճուղու թիվ 4 հասցեում գտնվող անշարժ գույքին /հիմք՝ Արմավիրի մարզի նոտարական տարածքի նոտար Տարոն Վրեժի Գրիգորյանի կողմից 13.05.2024թ. կնքված թիվ 2696 գրանցամատյանով գրանցված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հասցեի հայտի քաղվածքի ծածկագիր՝ 04999NXD9XPL/ տրամադրել հասցե՝Վաղարշապատ համայնք, ք. Էջմիածին Մ. Մելքոնյան փողոց թիվ 9 արտադրամաս:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8244

24 մարտի 2024թ. ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԹԻՎ 2 <<ՇՈՒՇԱՆ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վաղարշապատ համայնքի ավագանու 18.01.2022թ. թիվ 24 որոշմամբ, հիմք ընդունելով 2024թ. փետրվարի 13-ի <<ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության մանկապարտեզ ՀՈԱԿ-ներում երեխաների խնամքի համար գանձվող 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին>> թիվ 11-Ն որոշումը, <<ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայության երաժշտական և գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ-ներում 2024 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու, արտոնություններ կիրառելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկն ու տեղեկությունները սահմանելու մասին>> թիվ 12-Ն որոշումը, հիմք ընդունելով Կրթության և մշակույթի բաժնի պետի 21.05.2024թ. զեկուցագիրը, ինչպես նաև հաշվի առնելով Վաղարշապատի համայնքապետարանի սոցիալական աշխատողների ուսումնասիրությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործող մանկապարտեզ հաճախող երեխաների խնամքի համար գանձվող վարձավճարների գծով արտոնություններից օգտվող թվով 1 /մեկ/ երեխաների ցանկը՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս հանդիսացող հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ**